



ICON® GUM

ԳՈՒՄԻԱՐԱԲԻԿ ԼՈՒԾՈՒՅԹ,
ՁԱԽԱՊՏՈՒՅՏ ԵՎ ՉՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ



ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձախապտուկյտ գումիարաբիկ (E 414) 20%, ծծմբային երկօքսիդ (E 220) 0.4%, ապամիներալացված ջուր, ըստ անհրաժեշտության՝ մինչև 100%:
Պարունակում է սուլֆիտներ:



ԲՆՈՒԹԱԳԻՐ

ICON® GUM-ը ստացվում է բարձրորակ *Acacia verec*-ից՝ բուսաբանական տեսակից, որն ընդունակ է արտադրել ձախապտուկյտ արտաքիրտ (էքսուդատ):
Enologica Vason-ի հետազոտության և զարգացման դեպարտամենտը մշակել է բացառիկ արտադրական գործընթաց, որը չի խախտում այս պաշտպանիչ կոլոիդի ամբողջականությունը և պահպանում է դրա ֆիլտրունակությունը նույնիսկ միկրոծակոտկեն թաղանթների վրա. հիդրոլիզի գործընթաց տեղի չի ունենում, այլ կիրառվում է լուծարման հատուկ մեթոդ, որին հաջորդում է հատուկ «SMART» զտման գործընթաց: Չտման հնարավորությունը յուրաքանչյուր խմբաբանակի համար վերահսկվում է Enologica Vason-ի QC լաբորատորիայի կողմից՝ Ju.Cla.S-ի QFT համակարգով (*) զտման ինդեքսի և Vmax-ի ստուգման միջոցով: ICON® GUM-ը հանդիսանում է կատարյալ կայուն հիդրոֆիլ կոլոիդ՝ ձևավորելով քվազի-պաշտպանիչ շերտ հիդրոֆոբ կոլոիդների շուրջ, որոնք, հետևաբար, ի վիճակի չեն միավորել և պղտորել գինին: Նման արդյունավետ կայունացնող էֆեկտն ապահովվում է պրոտեինային ֆրակցիայի առկայությամբ, որն ի վիճակի է մեծացնել գինու կոլոիդային բարդությունը՝ էապես բարելավելով զգայական հատկությունները, այդ թվում՝ համային կլորությունը և փափկությունը: ICON® GUM-ն ակտիվորեն նպաստում է գինու անուշաբույր նյութերի պահպանմանը: Լուծույթում առկա ծծմբի երկօքսիդի միակ գործառնությունը օքսիդացումից և հնարավոր միկրոկենսաբանական փոփոխություններից պաշտպանությունն է:



ԿԻՐԱՌՈՒՄ

ICON® GUM-ը արդյունավետ պաշտպանություն է ապահովում ներկանյութերի նստվածքից՝ միաժամանակ ուժեղացնելով համի ներդաշնակության և փափկության զգացողությունը: ICON® GUM-ն ունի սիներգետիկ ազդեցություն V CMC L-ի վրա, հետևաբար երկու արտադրանքները լիովին համատեղելի են: Այն հեշտացնում և երկարացնում է մետաթարթաթթվի META V®-ի գործողությունը: ICON® GUM-ի ավելացումը հնարավոր է նաև մաքուր գինիների համար՝ շշայցումից անմիջապես առաջ, քանի որ այն չի փոխում գինու զտման համաթիվը, որի պատճառով այն համարվում է միկրոզտվող:





ICON® GUM

ԳՈՒՄԻԱՐԱԲԻԿ ԼՈՒԾՈՒՅԹ,
ՁԱԽԱԴՏՈՒՅՏ ԵՎ ՉՏԱՆ ԵՆԹԱԿԱ

ICON® GUM-ն օգտագործելիս հետևեք գործող համապատասխան
իրավական կարգավորումներին:



ICON® GUM

ԳՈՒՄԻԱՐԱԲԻԿ ԼՈՒԾՈՒՅԹ,
ՁԱՆԱԴՏՈՒՅՏ ԵՎ ՉՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ



ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ICON® GUM-ը պատրաստ է օգտագործման համար: Ավելացնել անմիջապես զանգվածին՝ ապահովելով համապատասխան հոմոգենիզացումը: ICON® GUM-ի օգտագործումը խորհուրդ է տրվում նույնիսկ միկրոգտումից առաջ, քանի որ առաջարկվող դոզավորումը չի փոխում գինիների զտման ցուցանիշները: Օգտագործեք ICON® GUM սպիտակուցային կայուն գինիների համար (խորհուրդ է տրվում օգտագործել PROTEOTEST®)՝ լաբորատոր ստուգումից հետո:



ԴՈՉԱՎՈՐՈՒՄ

25-ից մինչև 150 գ/հլ սպիտակ և կարմիր գինիների համար:
Չգուշացում՝ 100 գ/հլ ICON® GUM-ը գինու բաղադրությանն ավելացնում է 4 մգ/լ ծծմբի երկօքսիդ:



ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ

25 կգ, 300 կգ և 1000 կգ IBC կոնտեյներներ:



ՊԱՅԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Պահել զով և չոր միջավայրում՝ լույսից պաշտպանված:
Չգուշորեն փակեք բացված կոնտեյներները և օգտագործեք նյութը որքան հնարավոր է շուտ:



ՎՏԱՆԳ

Եվրոպական գործող կանոնակարգերի հիման վրա արտադրանքը դասակարգվում է. ոչ վտանգավոր (տե՛ս MSDS):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(*) "Il confezionamento a freddo delle bevande: proposte per incrementarne le caratteristiche di qualità e sicurezza" - R. Ferrarini, S. Buiatti, R. Zironi